

ՍԱՅԱՔ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ 250-ԱՄՅԱԿԸ

Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ նշվեց հայ մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։ Աշխարհի մոտ երկու հարյուր խոշորագույն քաղաքներում առաջավոր կուլտուրայի գործիչները, բոլոր խաղաղասեր ժողովուրդները մեծարեցին բարեկամության, եղբայրության և հումանիզմի անմահ երգչին։ Նրա անթառամ պոեզիան, իր հումանիստական գաղափարներով ու արվեստի կատարելությամբ, այսօր էլ հմայում ու հուզում է ընթերցողներին և ունկնդիրներին աշխարհի բոլոր կողմերում՝ սերմանելով նրանց հոգում մարդկային վեհ ու ազնիվ զգացմունքներ։

Սայաթ-Նովայի հորելյանը լայնորեն նշվեց Սովետական Միությունում, մասնավորապես Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաներում՝ որոնց ժողովուրդների բարեկամության կենդանի մարմնացումն է նա՝ իր եռալեզու երգ ու նվագով, իր զգացմունքներով ու խոհերով։ Այստեղ սայաթնովյան օրերն սկսվեցին դեռևս այս տարվա մայիս ամսից, Թբիլիսիում տեղի ունեցած վարդատոնով։ Այնուհետև գումարվեցին բաղմաթիվ գիտական նստաշրջաններ, կարդացվեցին ղեկուցումներ, բացվեցին ցուցահանդեսներ, անցկացվեցին երգի ու ասմունքի մրցանակաբաշխություններ և մի շարք այլ հորելյանական միջոցառումներ՝ նվիրված հանճարեղ բանաստեղծի ու երգահանի հիշատակին։

Սեպտեմբերի 20-ին, 21-ին և 22-ին Երևանի ռեսպուբլիկական ստադիոնում տեղի ունեցավ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված տոնահանդես, որին մասնակցեց ավելի քան հարյուր հազար մարդ։ Սա հորելյանական ամենամասսայական միջոցառումներից մեկն էր, որին որպես հյուր ներկա էին նաև Վրաստանից, Ադրբեջանից և Սովետական Միության այլ վայրերից ժամանած բաղմաթիվ հանդիսականներ։ Այդ տոնահանդեսում ելույթ ունեցան ինչպես Հայաստանի, այնպես էլ Մոսկվայի, Լենինգրադի, Բելոռուսիայի, Վրաստանի, Ադրբեջանի և էստոնիայի արվեստի վարպետները՝ ավելի քան հազար մարդ։ Տոնահանդեսը վերածվեց ժողովուրդների բարեկամության վառ ցույցի։

«Երգի արքայի» հորելյանին նվիրված գրական-երաժշտական երկու ճոխ երեկո տեղի ունեցավ Հայֆիլհարմոնիայի համերգաին մեծ դահլիճում՝ մասնակցությամբ երաժշտական-կատարողական լավագույն ուժերի։ Երեկոների ծրագրերն ամբողջությամբ կաղմված էին Սայաթ-Նովայի ստեղծագործություններից։

Սպիտակում և Կամոյում անցկացվեց մեկ այլ մասսայական միջոցառում՝ կազմակերպվեց «երգի տոն», որին մասնակցեցին գեղարվեստական ինքնագործունեության խմբերն ու անհատ կատարողները։ Այստեղ և՛ հազարավոր մասնակիցների շուրթերից հնչում էր Սայաթ-Նովայի երգը։ Գործում անցկացվեց գեղարվեստական ինքնագործունեության տասնօրյա ստուգատես. կատարվեցին Սայաթ-Նովայի ստեղծագործությունները և սովետահայ դուստնների երգերը՝ նվիրված մեծ բանաստեղծին։ Ստուգատեսին մասնակցեցին 30-ից ավելի ինքնագործ խմբեր և ավելի քան 300 անհատ կատարողներ։ Ալավերդու շրջանային ժողովրդական թատրոնը բեմադրեց Սուրեն Ավշյանի «Սայաթ-Նովա» պատմական դրաման, որը ներկայացվեց նաև ռեսպուբլիկայի մի շարք շրջաններում ու Երևանում։ Լենինականի Ա. Մոսկովյանի անվան պետական դրամատիկական թատրոնում ևս բեմադրվեց հանճարեղ գուսանին նվիրված մի պիես, որը գրել է նույն թատրոնի արտիստ Լևոն Արրահամյանը։ Լենինականում տեղի ունեցավ նաև գեղարվեստական երեկո, որը կազմակերպել էին քաղսովետի գործկոմի կուլտուրայի բաժինը և Հայաստանի գրողների միության Լենինականի բաժանմունքը։

Հորելյանի առթիվ մեծ ցուցահանդես բացվեց Ալ. Մյասնիկյանի անվան ռեսպուբլիկական գրադարանում։ Ցուցահանդեսն սկսվում էր «Նախասայաթնովյան շրջանի միջնադարյան հայ գրականությունը» բաժնով։ Առանձին ցուցափեղկեր էին հատկացված մեծ բանաստեղծի ժամանակաշրջանին, նրա ստեղծագործութունների հրատարակությանը հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, ռուսերեն և այլ լեզուներով։ Հատուկ բաժիններ էին նվիրված սայաթնովագիտությանը, «Սայաթ-Նովան գրականության մեջ» և «Սայաթ-Նովան արվեստում» թեմա-

ձևերին: Նշանակալից տարեթվին նվիրված ցուցահանդեսներ րացվեցին նաև Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայում, Նրևանի պետական համալսարանում, Ալյումինի գործարանի կուլտուրայի պալատում, ինչպես նաև ռեսպուբլիկայի այլ քաղաքներում ու շրջաններում: Ժողովրդական ստեղծագործության ռեսպուբլիկական տանը ցուցադրվեցին ավելի քան 60 ինքնուս ստեղծագործողների՝ նկարիչների, քանդակագործների, փորագրողների գործերը՝ նվիրված Սայաթ-Նովային:

Հոկտեմբեր ամսին Նրևանի գիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում անցկացվեցին մի շարք գիտական նստաշրջաններ: Հայ մեծ բանաստեղծի ծննդյան 250-ամյակին նվիրված Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովրդական ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը «Սայաթ-Նովան և նրա դարաշրջանը» թեմայով զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Մ. Ս. Հասրաթյանը: Գիտության վաստակավոր գործիչ Խ. Ս. Սարգսյանը զեկուցեց հանճարեղ քնարերգուի ստեղծագործության մասին: «Սայաթ-Նովան և միջնադարյան հայ տաղերգուները» թեմային էր նվիրված բանաստեղծ, ակադեմիայի գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Պարույր Սևակի զեկուցումը:

Նրևանի պետական համալսարանի գիտական սեսիայում մեծ բանաստեղծի կյանքի և ստեղծագործության առանձին հարցերին նվիրված զեկուցումներով հանդես եկան Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Մ. Մկրյանը, Գ. Սևակը, Թրիխսիի պետական համալսարանի պրոֆեսորներ Վ. Թոփուրիան, Մ. Չիքուրյան, պրոֆ. Ս. Պողոսյանը, ղուցենտներ Ռ. Հարությունյանը, Վ. Մկրտչյանը, Գ. Նալբանդյանը, Մ. Զավարյանը և ուրիշներ:

Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի հորելյանական սեսիայում Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց պրոֆ. Հ. Ղանալանյանը: Մեծ բանաստեղծի և մտածողի աշխարհայացքի բնութագրման էր նվիրված փիլիսոփայական գիտությունների ղուկտոր-պրոֆեսոր Գ. Բրուսյանի զեկուցումը: «Սայաթ-Նովայի լեզուն և ոճը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների ղուկտոր Հ. Կուսիկյանը: Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը զեկուցեց «Սայաթ-Նովան իր դարաշրջանի բանաստեղծ և գաղափարախոս» թեմայով: «Սայաթ-Նովան սիրու երգիչ», — այսպես էր խորագրված գիտության վաստակավոր գործիչ Տ. Հախումյանի զեկուցումը:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված գիտական նստաշրջաններ կազմակերպեցին նաև Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը, Հայկական ՍՍՌ կուլտուրայի միևիտրության արվեստի ինստիտուտը և կոմպոզիտորների միությունը, Խ. Արույանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը: Մեծ բանաստեղծին նվիրված ճոխ երեկո տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների միությունում:

Գիտական սեսիաներ, զեկուցումներ տեղի ունեցան, ցուցահանդեսներ կազմակերպվեցին Մոսկվայում, Թրիխսիում, Բաքվում և Միության այլ քաղաքներում:

Հոկտեմբերի 22-ին Մոսկվայում, Մարսիմ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում տեղի ունեցավ հայ հանճարեղ բանաստեղծ Սայաթ-Նովային նվիրված գիտական նիստ, որը ներածական խոսքով բացեց Ի. Անիսիմովը: ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Դմ. Բլագոյի հիմնական զեկուցումից հետո, որը նվիրված էր Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության բնութագրմանը, սեսիայում գիտական հաղորդումներով հանդես եկան Ս. Գայսարյանը, Ա. Բարամիձեն, Խ. Սարգսյանը և ուրիշներ: Սեսիայի նյութերը լույս են տեսնելու առանձին գրքով:

Հոկտեմբերի 26-ին Նրևանում, Ալ. Սպենդիարյանի անվան Հենինի շքանշանակիր օպերայի և յալետի ակադեմիական թատրոնում, տեղի ունեցավ հորելյանական հանդիսավոր նիստ, որին ռեսպուբլիկայի աշխատավորության, գիտության և կուլտուրայի ներկայացուցիչների հետ միասին ներկա էին Սովետական Միության եղբայրական ժողովուրդների գրական կազմակերպությունների պատվիրակություններ, Հնդկաստանի, Դանիայի, Զիլիի, Իտալիայի մի շարք գրողներ, որոնք եկել էին մատակցելու Սայաթ-Նովայի հորելյանական հանդեսին, Բուլղարիայից, Ռումինիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Արգենտինայից և այլ երկրներից ժամանած հայեր, որոնք այդ օրերին հյուրընկալվում էին Նրևանում:

Հորելյանական հանդիսավոր նիստի նախագահությունում էին Հայաստանի կոմպարտիայի և կառավարության ղեկավարները, հորելյանական կառավարական հանձնաժողովի անդամները, գիտության, գրականության և արվեստի ականավոր գործիչներ, արտադրության առաջավորներ, եղբայրական բոլոր ռեսպուբլիկաների ներկայացուցիչներ: Հանդիսավոր նիստը բացեց հորելյանական կառավարական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՌ Միևիտրների սովետի նախագահ Ա.

Քոչինյանը: Նա բնութագրում է Սայաթ-Նովային՝ որպես Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամության մարմնավորողը: մեծ բանաստեղծը գաղափարական, քաղաքական ու բարոյական հսկայական գեր է խաղացել այդ բարեկամությունը ամրապնդելու գործում: Ֆեոդալական բռնության ծանր ժամանակներում, հեռու մնալով ժողովուրդ-ձերին միմյանցից բաժանող նախապաշարումներից, Սայաթ-Նովան փառաբանեց մարդկանց ու ժողովուրդների համերաշխությունը, հաստատեց ժողովուրդների հոգեհարազատության մթնոլորտը գրականության և արվեստի մեջ: Հանդիսավոր նիստում Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Հայաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար Է. Թովրյանը:

Այնուհետև խաղաղության համաշխարհային խորհրդի, ՍՍՌՄ գրողների միության վարչության և խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անունից Հորեյանական նիստում հանդես եկավ բանաստեղծ և հրապարակախոս Լևոնիդ Նովիչենկոն: «Բանաստեղծի հանճարեղ անունը,—ասաց նա— անգին ալմաստի պես փայլատակում է այն հիանալի դրողների, նկարիչների, լուսավորիչների, գիտնականների բազմաթիվ անունների համաստեղության մեջ, որոնց գործերով հայ ժողովուրդը հարստացրել է մեր հայրենիքի ու ամբողջ մարդկության կուլտուրայի գանձարանը»:

Հորեյանական նիստում ելույթ ունեցան ՌՍՖՍՌ գրողների կողմակերպության կողմից՝ բանաստեղծ Վասիլի Ֆյոդորովը, Վրաստանի գրողների միության վարչության առաջին քարտուղար, ակադեմիկոս Ի. Բակլի Արաշիձեն, Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Սուլեյման Ռուստամը, ուկրաինացի պոետ Վիկտոր Կոչեսկին, Բելուսիայի գրողների ներկայացուցիչ, «Լիտերատուրա ժիզն» թերթի գլխավոր խմբագիր Նիկիֆոր Պաշկևիչը, Ուզբեկստանի գրական հասարակայնության անունից՝ ականավոր բանաստեղծ Շուհրաբը, դազախ դրամատուրգ և բանաստեղծ Կափան Սաաի ալդին, Կիրգիզիայի գրողների կողմից՝ բանաստեղծ Ղամշի Զուլուսովը, Տաջիկստանից՝ գրականագետ Ռասուլ Խոդի-զադեն, Թուրքմենիա ից՝ քննադատ Աթա Աթաջանովը, լատվիացի բանաստեղծ Արվիդ Սկալրեն, Լիտվայից՝ անվանի պոետ Յուստինավ Մարցինկյավիչը, Մոլդավիայից՝ Վիկտոր Տելեուկենը, էստոնիայից՝ Լեյդա Տիգանեն: Հորեյանական նիստում ելույթ ունեցան հնդիկ գրողների պատվիրակության կողմից՝ Մալիք Մայեդ Արդուր, չիլիացի ականավոր բանաստեղծ

Նիկտոր Պարան և իտալահայ գրող Արամայիս Սրապյանը:

Հոկտեմբերի 29-ին Հորեյանական հանդիսավոր նիստ տեղի ունեցավ Թբիլիսիում, Զ. Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում: Նիստի նախագահությունում էին ՍՄԿՊ Անդրկովկասյան բյուրոյի, Վրաստանի կոմպարտիայի և կառավարության ղեկավարները, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Մոսկվայի գրողներ ու արվեստագետներ, Թբիլիսիի աշխատավորության ներկայացուցիչներ: Հորեյանական երեկոն ներածական խոսքով բացեց ակադեմիկոս բանաստեղծ Ի. Արաշիձեն: Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցում կարդաց ակադեմիկոս, բանաստեղծ Բ. Լեոնիձեն: «Մեծ գուսանի ստեղծագործությունը,—ասաց նա,—անգնահատելի մի ավանդ է մեր երկրի բազմազգ կուլտուրայի գանձարանում: Այսօր էլ ադ ստեղծագործությունը ծառայում է խաղաղության և մարդկանց երջանկության, հումանիզմի և սոցիալական արդարության համար մղվող պայքարի ազնիվ նպատակներին»:

ՍՍՌՄ գրողների միության և խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անունից ելույթ ունեցավ գրող Լ. Նովիչենկոն, ՌՍՖՍՌ գրողների կողմից՝ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Դ. Բլադսյուր: Հանդիսավոր երեկոյին ելույթ ունեցան նաև սովետահայ գրող Ն. Զարյանը, Ադրբեջանից՝ Օ. Սարիվելին, Ուկրաինայից՝ Վ. Կոչեսկին: Վրաց բանաստեղծներ Կ. Կալաձեն և Բ. Նոնեշվիլին կարդացին հանճարեղ երգչին նվիրված իրենց ստեղծագործությունները:

Սայաթ-Նովային նվիրված Հորեյանական եզրափակիչ երեկոն Բաքվում կայացավ հոկտեմբերի 30-ին: Երեկոն բացեց Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ Է. Ն. Ալիխանովը: Հանճարեղ բանաստեղծի ստեղծագործությունը բնութագրող զեկուցումով հանդես եկավ սեպուրիկայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Գ. Արասլին: Սայաթ-Նովայի ստեղծագործությունը, նշեց նա, տոգորված է հումանիզմի, ժողովուրդների բարեկամության գաղափարներով, գովերգում է մարդկային հոգու գեղեցկությունը և մոտ ու հարազատ է մեր բազմազգ հայրենիքի բոլոր ժողովուրդներին: Հորեյանական երեկոյին հանդես եկան նաև մոսկվացի բանաստեղծ Վ. Ֆյոգորովը, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Հր. Հովհաննիսյանը, վրաց բանաստեղծ Կ. Կալաձեն, Ադրբեջանի ժողովրդական բանաստեղծ Ռասուլ Ռզան և ուրիշներ: Երեկոյի ընթացքում արտասանվեցին Սա-

յաթ-Նովայի տաղերից, ինչպես նաև նրան նվիրված մի շարք բանաստեղծություններ:

Մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան հայ մեծ բանաստեղծի ծննդյան 250-ամյակը հանդիսավոր կերպով նշեց հոկտեմբերի 31-ին: Միությունների տան Սյունազարդ դահլիճ էին հավաքվել Մոսկվաի հասարակայնության ներկա ացուցիչներ, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գրողների պատվիրակությունները, Ռուսաստանի, Ուկրաինայի և Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների գրողների ու արվեստագետների ներկայացուցիչները:

Հանդիսավոր երեկոն բացեց ՍՍՌՄ գրողների միության վարչության քարտուղար Ա. Սուրկովը: Այնուհետև ընթերցվեց խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի նախագահ, ականավոր գրող Ն. Տիխոնովի ճառը: «Սայաթ-Նովա» դա ժողովուրդների սիրո ու բարեկամության երգչի անուն է,—ասված էր ճառում,—և այն, որ այսօր նրա անունն արտասանվում է բովանդակ աշխարհում, արդարացի է ու բերկրալից... Սայաթ-Նովան մեր առջև հանում է իր ամբողջ փայլով՝ ժամանակի չի նսեմացրել նրա բանաստեղծությունների երանգները: Նա եղել է և մնում է պատկերավորության բոլոր նրբերանգներով փայլող բանաստեղծության, երաժշտական, բնույշ և հնչեղ բանաստեղծության չգերազանցված վարպետ... Սայաթ-Նովան, որը ժողովրդի այն-

քան շատ տառապանքների, ավերածությունների, բռնակալների խժողժությունների ականատես է եղել, ինքր խաղաղության ու խաղաղ աշխատանքի մարդ էր: Շատ ճանապարհներ է անցել բանաստեղծը, բայց դրանք երգչի կյանքի հետ իրենց վախճանը չգտան: Նա և իր երգերը շրջեցին ամբողջ աշխարհով մեկ, որովհետև բանաստեղծը գտել է դեպի մարդու սիրտը տանող ճշմարիտ ուղին: Ուստի մենք մեծարում ենք նրան այսօր և ամբողջ հոգով ասում՝ «Փառք ու պատիվ ժողովուրդների բարեկամության երգչին, մարդկային սրտի երգչին, մեր հրաշալի բարեկամ ու հավերժական ուղեկից Սայաթ-Նովային»:

Այնուհետև ելույթ ունեցան գրականագետ Ս. Հարությունյանը՝ Հայաստանից, Ուկրաինայի ներկայացուցիչ Բվան Լեն, Ադրբեջանի ժողովրդական գրող Միրզա Իբրահիմովը, Վրաստանի պատվիրակ, գրականագետ Գ. Բարամի-ձեն: Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի բանաստեղծները, Պարզմանիչներն ու արտիստները արտասանեցին անմահ քնարերգուի սուեղծագործություններից:

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի հոբելյանական հանդեսները վերածվեցին ժողովուրդների բարեկամության և կուլտուրայի իսկական տոնի:

Յ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ հանճարեղ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի առթիվ Հայաստանում լույս տեսան բազմաթիվ հոդվածներ, ժողովածուներ, ուսումնասիրություններ և մենագրություններ, որոնք սայաթնովագիտությանը հարստացրին նոր ավանդույթ:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, Խաղե (Եմանանաբյուն), Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1983, 144 էջ: Սայաթ-Նովայի հայտնի «Դավթաթ»-ի նմանահանությունն է: Այս «Դավթաթ»-ը մինչև իր վերջին հանգրվանը՝ գրականության և արվեստի թանգարան հասնելը, երկար ճանապարհ է անցել: Գեպի Վրաստան Ազա Մահմեդ խանի կատարած արշավների նախադասկին Սայաթ-Նովային քննադատելու իր հետ այն տանում է Ադգոն, հետագայում ձեռագիրն անցնում է երգչի թոռան՝ Մովսես Սայաթյանի ձեռքը: Բժիշկ Հովհաննես Պանոսյանը վերջինիս մոտ տեսնելով «Դավթաթ»-ը՝ այն վերցնում ու հանձնում է Սայաթ-Նովայի առաջին հայանագործողին՝ Գևորգ Ախվերդյանին, որը քրտնաշան ու

համառ աշխատանքից հետո վերժանում է «Դավթաթ»-ի հայերեն խաղերը և բանասիրական արժեքավոր ուսումնասիրությամբ 1852 թ. լույս ընծայում Մոսկվայում: Այնուհետև «Դավթաթ»-ը նորից հանձնվում է Մովսես Սայաթյանին, որի մահից հետո այն անցնում է վերջինիս որդուն՝ Բաղրամին: 1913 թ. նա «Դավթաթ»-ը հանձնում է հայ գրողների կովկասյան ընկերությանը: Մինչև 1921 թ. «Դավթաթ»-ը գտնվում էր այդ ընկերության նախագահի՝ Հովհ. Թումանյանի մոտ: Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հայ գրողների կովկասյան ընկերության վարչությանը որոշմամբ այն հանձնվում է Հայկական ՍՍՌ կուլտուր-պատմական թանգարանին:

Նախաձեռնելով Սայաթ-Նովայի խաղերի հիմնական ինքնագիրը ժողովածուի լույս ընծայումը, Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը նպաստել է ունեցել գիտական լայն շրջանառության մեջ գնել այն և գրանդ իսկ հեշտացնել մեծ բանաստեղծի ժառանգությունը: